Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-165-24.10.2017-ՊԱ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Այլընտրանքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում <<սույն օրենքով>> բառերից առաջ լրացնել <<Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում <<, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում>> բառերը փոխարինել <<՝ օրենքով սահմանված կարգով>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում.

ա. <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարզում է>> բառերը փոխարինել <<պարզում է օրենքով սահմանված կարգով>> բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:>>.

2) 7-րդ մասում <<վերադարձվում է դիմումատուին>> բառերից հետո լրացնել <<, որից հետո հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 8.1-ին հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Հանրապետական հանձնաժողովի որոշումները դատական կարգով վիճարկելիս հանրապետական հանձնաժողովի անունից դատարանում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:>>:

ՀՈԴՎԱԾ 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 12-րդ հոդվածը:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասում <<օրենքով>> բառից առաջ լրացնել <<շարքային կազմի պարտադիր զինծառայողների համար>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասում <<օրենքով սահմանված կարգով>> բառերը փոխարինել <<սույն օրենքով սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու կամ ժամկետից շուտ՝ օրենքով սահմանված կարգով հաշմանդամություն ունեցող ճանաչվելու դեպքերում>> բառերը.

2) լրացնել 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<7. Սույն հոդվածի 6-րդ մասում սահմանված դեպքերում այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու օրվան կամ օրենքով սահմանված կարգով տրված հաշմանդամություն ունեցող ճանաչվելու վերաբերյալ տեղեկանքն այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ներկայացվելու օրվան հաջորդող օրն այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանով այլընտրանքային աշխատանքային ծառայողը հանվում է կազմակերպության հաստիքացուցակներից: Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանում պարտադիր նշվում է այլընտրանքային աշխատանքային ծառայողին կազմակերպության հաստիքացուցակներից հանելու հիմքը և այլընտրանքային աշխատանքային ծառայողի պարտավորությունը՝ հրամանի պատճենն այլընտրանքային աշխատանքային ծառայողին հանձնելու օրվանից 7-օրյա ժամկետում վերջինիս կողմից իր զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ: Սույն մասում նշված այլընտրանքային աշխատանքային ծառայություն

անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանի պատճենն ***3-օրյա ժամկետում*** ուղարկվում է նաև հանրապետական հանձնաժողովին:>>:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի երկրորդ պարբերությունում <<չի կարող շաբաթական 48 ժամից ավելի կամ պակաս լինել>> բառերը փոխարինել <<սահմանվում է շաբաթական 48 ժամ>> բառերով.

2) լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<6. Այլընտրանքային աշխատանքային ծառայողների մասով սույն օրենքով չկարգավորված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով:>>:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում <<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով>> բառերը փոխարինել <<օրենքով սահմանված կարգով>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը, բացառությամբ 2-րդ հոդվածի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանում է այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելու եւ անցկացնելու կարգը:

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այլընտրանքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ***Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,*** սույն օրենքով, "Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով"՝ այնքանով, որքանով սույն օրենքով այլ բան նախատեսված չէ, այլ օրենքներով, ինչպես նաեւ սույն օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 2. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

ա) այլընտրանքային զինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն.

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

3. Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի եւ հասարակության առջեւ քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է եւ չունի պատժի, անձի պատվի եւ արժանապատվության նվաստացման բնույթ:

ՀՈԴՎԱԾ 3. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԸ

1. Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

2. Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից եւ ընտրել այլընտրանքային ծառայությունը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից եւ ընտրել պարտադիր զինվորական ծառայությունը:

ՀՈԴՎԱԾ 4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչեւ հերթական զորակոչին նախորդող մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմել է այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է, եւ որի այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) որոշել է ուղարկել այլընտրանքային ծառայության: Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է եւ կազմված է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, ոստիկանության եւ պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման իրավունք ստանալու հիմք ունեցող քաղաքացիների վրա:

ՀՈԴՎԱԾ 5. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 30 ամիս:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվում է 36 ամիս:

ԳԼՈՒԽ 2.

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

ՀՈԴՎԱԾ 6. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Այլընտրանքային ծառայության զորակոչը եւ պահեստ արձակումը կատարվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի եւ պահեստ արձակելու հետ

համատեղ~~, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում:~~ ՝ ***՝օրենքով սահմանված կարգով***:

Այլընտրանքային ծառայության համար դիմած քաղաքացին, այլընտրանքային ծառայության զորակոչ հայտարարվելուց հետո, պարտավոր է ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ:

Այլընտրանքային ծառայության զորակոչի անցկացման հարցերով զբաղվում են տարածքային զինվորական կոմիսարիատը եւ հանրապետական հանձնաժողովը:

ՀՈԴՎԱԾ 7. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին (այսուհետ՝ դիմումատու) այլընտրանքային ծառայություն ընտրելիս սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետում գրավոր դիմում է ներկայացնում այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է:

2. Դիմումում նշվում են այն ներկայացնելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, դիմումատուի անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը, բնակության վայրի հասցեն, նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը, պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու հիմնավորումները:

3. Դիմումը գրանցվում է տարածքային զինվորական կոմիսարիատում:

4. Տարածքային զինվորական կոմիսարիատը պարզում է դիմումի ներկայացման՝ սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետի պահպանման հարցը: Եթե դիմումը ներկայացվել է այդ ժամկետի խախտմամբ, ապա տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 5 օրվա ընթացքում այն վերադարձնում է դիմումատուին: Տարածքային զինվորական կոմիսարիատը կարող է հարգելի համարել դիմումը ներկայացնելու ժամկետը բաց թողնելը, եթե այն բաց է թողնվել դիմումատուից անկախ պատճառներով:

5. Եթե դիմումը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներին, ապա այն 5 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին՝ նշելով դիմումում թույլ տրված բոլոր ձեւական սխալները: Դիմումը վերադարձվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դիմումատուն իրավունք ունի վերացնելու դիմումում թույլ տրված բոլոր ձեւական սխալները եւ այն կրկին ներկայացնելու տարածքային զինվորական կոմիսարիատ: Սույն հոդվածի 4-րդ մասում նշված կարգով դիմումը վերադարձնելու կամ սույն մասում նշված կարգով դիմումը կրկին չներկայացվելու, ինչպես նաեւ սույն օրենքի 8.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դիմումը մերժվելու դեպքերում քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի:

6. Տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 30-օրյա ժամկետում ~~"Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարզում է~~ ***պարզում է օրենքով սահմանված կարգով*** դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը եւ դրանց բացակայության դեպքում ներկայացված դիմումը եւ դիմումատուի անձնական գործն ուղարկում է հանրապետական հանձնաժողով: ***Հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:***

7. Դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության

դեպքում դիմումը հանրապետական հանձնաժողով չի ներկայացվում, եւ այն տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին ***, որից հետո հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը***:

ՀՈԴՎԱԾ 8. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼԸ

1. Հանրապետական հանձնաժողովը ներկայացված դիմումը քննարկում է առանձին նիստում, որի անցկացման ժամանակի եւ վայրի մասին նախապես տեղեկացվում է դիմումատուն, որն իրավունք ունի մասնակցելու հանրապետական հանձնաժողովի նիստին: Հանրապետական հանձնաժողովի պահանջի դեպքում դիմումատուի մասնակցությունը հանձնաժողովի նիստին պարտադիր է:

2. Հանրապետական հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել կրոնագետներ, հոգեբաններ եւ այլ մասնագետներ, այլընտրանքային ծառայության վայրերի հիմնարկների, կրոնական եւ այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ անձինք:

ՀՈԴՎԱԾ 8.1. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Հանրապետական հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ որոշում է կայացնում նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով, եթե հանձնաժողովի նիստին ներկա է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունման պահից 10 օրվա ընթացքում ուղարկվում է դիմումատուին եւ համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ:

2. Դիմումը քննարկելուց հետո հանրապետական հանձնաժողովը որոշում է կայացնում դիմումատուին նրա նախընտրած այլընտրանքային ծառայության ուղարկելու կամ դիմումը մերժելու մասին:

3. Դիմումը բավարարելու եւ դիմումատուին այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկելու մասին որոշմամբ հանրապետական հանձնաժողովը սահմանում է նաեւ այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում դիմումատուի կողմից կատարվող աշխատանքների տեսակը եւ բնույթը: Այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված անձանց կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում կատարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Դիմումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում հանրապետական հանձնաժողովը նշում է դիմումը մերժելու հիմքերը եւ այն վիճարկելու կարգը:

5. Հանրապետական հանձնաժողովի կողմից դիմումը քննարկելու եւ դրա վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ ամիսը: ***Հանրապետական հանձնաժողովի որոշումները դատական կարգով վիճարկելիս հանրապետական***

հանձնաժողովի անունից դատարանում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

ՀՈԴՎԱԾ 9. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Հանրապետական հանձնաժողովի որոշմամբ քաղաքացու դիմումը՝ պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին կարող է մերժվել, եթե այլընտրանքային ծառայության մասին՝

1) դիմում ներկայացրած քաղաքացին երկրորդ անգամ կանչվում է տեղական զորակոչային հանձնաժողովի նիստին եւ անհարգելի պատճառով չի ներկայանում.

2) դիմումատուն ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ.

3) դիմումն ակնհայտ անհիմն է:

ՀՈԴՎԱԾ 10. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ԹՈՂՆԵԼԸ

(10-րդ հոդվածն ուժը կորցրել է 02.05.13 ՀՕ-31-Ն օրենք)

(10-րդ հոդվածը փոփ. 22.11.04 ՀՕ-162-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 11. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Այլընտրանքային ծառայության հետ կապված վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

~~ՀՈԴՎԱԾ 12. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ԿԱՄ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼԸ~~

~~Այլընտրանքային ծառայությունից ազատելը կամ տարկետում տալն իրականացվում է "Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

ՀՈԴՎԱԾ 13. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Զինվորական կոմիսարիատը, հանրապետական հանձնաժողովի որոշման հիման վրա, զորակոչիկին հանձնում է ծանուցագիր՝ այլընտրանքային ծառայության մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ: Այլընտրանքային ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը համարվում է այլընտրանքային ծառայության սկիզբ:

ՀՈԴՎԱԾ 14. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ

ԱՊԱՀՈՎԵԼԸ

1. Այլընտրանքային զինվորական ծառայության իրականացումը կազմակերպում եւ վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում եւ վերահսկում է (են) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (մարմինները):

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունն անցնում են այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպություններում:

5. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Այլընտրանքային ծառայությունը կազմակերպվում եւ իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ 3.

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼԸ

ՀՈԴՎԱԾ 16. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Այլընտրանքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացին սահմանված կարգով ուղարկվում է այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու վայրի զորամաս եւ ընդգրկվում զորամասի անձնակազմի ցուցակներում:

2. Այլընտրանքային զինվորական ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջեւ տալիս է երդում եւ ստանձնում համապատասխան պարտավորություններ:

3. Այլընտրանքային զինվորական ծառայողը ծառայության է անցնում զորամասի հրամանատարի հաստատած կարգացուցակի համաձայն: Նրա վրա տարածվում են զինված ուժերի կանոնագրքերի (կանոնադրությունների) դրույթները՝ բացառությամբ մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ կապված պահանջների:

4. Այլընտրանքային զինվորական ծառայողը կրում է համազգեստ, որի ձեւը եւ կրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Այլընտրանքային զինվորական ծառայողների հագուստի, սննդի, հանգստի եւ քնելու պայմանների ապահովումն իրականացվում է շարքային կազմի պարտադիր զինծառայողների համար սահմանված կարգով: Այլընտրանքային զինվորական ծառայողների հանգստի եւ քնելու համար նախատեսված տարածքներն առանձնացվում են պարտադիր զինծառայողների հանգստի ու քնելու համար նախատեսված տարածքներից:

6. Այլընտրանքային զինվորական ծառայողը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի պարտադիր կամ պայմանագրային զինծառայողների համար նախատեսված պաշտոններում չի կարող նշանակվել:

7. Այլընտրանքային զինվորական ծառայողներին արգելվում է ծառայության ընդգրկել մարտական ստորաբաժանումներում, նրանց տալ մարտական բնույթի հրամաններ, ինչպես նաեւ զենք եւ զինամթերք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ կապված հանձնարարություններ:

8. Այլընտրանքային զինվորական ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում եւ պահեստազորում հաշվառվում են ***շարքային կազմի պարտադիր զինծառայողների համար*** օրենքով սահմանված կարգով:

9. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է նույն զորամասում այլընտրանքային զինվորական ծառայողների առավելագույն թիվը:

ՀՈԴՎԱԾ 17. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Այլընտրանքային աշխատանքային ծառայության կանչված քաղաքացին պարտավոր է սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով տրված ծանուցագրում նշված օրը ներկայանալ այլընտրանքային աշխատանքային ծառայության վայր: Քաղաքացին այլընտրանքային աշխատանքային ծառայության վայր մեկնում է իր միջոցների հաշվին:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարն այլընտրանքային աշխատանքային ծառայողին ընդգրկում է կազմակերպության հաստիքացուցակում, որոշում է նրա աշխատանքի տեսակը, կարգն ու պայմանները եւ եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է քաղաքացուն ծանուցագիր հանձնած զինվորական կոմիսարիատին:

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայողը այլ կազմակերպություն կամ այլ վայր ծառայության կարող է փոխադրվել հանրապետական հանձնաժողովի համաձայնությամբ կամ նախաձեռնությամբ:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը, որպես կանոն, պետք է լինի այլընտրանքային ծառայողի հաշվառման վայրից (հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրից) ոչ ավելի, քան 30 կմ հեռավորության վրա: Հակառակ դեպքում այլընտրանքային աշխատանքային ծառայողին վճարվում է փոխհատուցում, որի չափը եւ վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. (5-րդ մասն ուժը կորցրել է 02.05.13 ՀՕ-31-Ն օրենք)

6. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում եւ պահեստազորում հաշվառվում են ~~օրենքով սահմանված կարգով~~ ***սույն օրենքով սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու կամ ժամկետից շուտ՝ օրենքով սահմանված կարգով հաշմանդամություն ունեցող ճանաչվելու դեպքերում:***

7. Սույն հոդվածի 6-րդ մասում սահմանված դեպքերում այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու օրվան կամ օրենքով սահմանված կարգով տրված հաշմանդամություն ունեցող ճանաչվելու վերաբերյալ տեղեկանքն այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ներկայացվելու օրվան հաջորդող օրն այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանով այլընտրանքային աշխատանքային ծառայողը հանվում է կազմակերպության հաստիքացուցակներից: Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանում պարտադիր նշվում է այլընտրանքային աշխատանքային ծառայողին

կազմակերպության հաստիքացուցակներից հանելու հիմքը և այլընտրանքային աշխատանքային ծառայողի պարտավորությունը՝ հրամանի պատճենն այլընտրանքային աշխատանքային ծառայողին հանձնելու օրվանից 7-օրյա ժամկետում վերջինիս կողմից իր զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ: Սույն մասում նշված այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարի հրամանի պատճենն 3-օրյա ժամկետում ուղարկվում է նաև հանրապետական հանձնաժողովին:

ՀՈԴՎԱԾ 19. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Այլընտրանքային զինվորական ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված չափով: Դրամական բավարարումը վճարվում է ծառայության վայրում:

1.1. Այլընտրանքային աշխատանքային ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ մինչեւ երեսուն հազար դրամի չափով:

2. Այլընտրանքային ծառայողին ծառայության ընթացքում տրվում է տարեկան 10 օրացուցային օր տեւողությամբ արձակուրդ: Այլընտրանքային ծառայողի երեխայի ծնվելու, ընտանիքի անդամի ամուսնության կամ մահվան դեպքերում նրան կարող է տրվել լրացուցիչ արձակուրդ՝ մինչեւ 5 օրացուցային օր տեւողությամբ:

Ելնելով ծառայողական անհրաժեշտությունից, ինչպես նաեւ ռազմական դրություն հայտարարվելու կամ արտակարգ իրավիճակների դեպքերում, համապատասխան ղեկավարի (հրամանատարի) հրամանով այլընտրանքային ծառայողն արձակուրդից կարող է հետ կանչվել՝ արձակուրդի չօգտագործված օրերը հետագայում օգտագործելու պայմանով:

3. Այլընտրանքային ծառայողների խրախուսումն իրականացվում է համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ծառայության ընթացքում այլընտրանքային ծառայողները պարտավոր են պահպանել ծառայության ներքին կարգապահության կանոնները, կատարել իրենց պարտականությունները եւ համապատասխան ղեկավարի (հրամանատարի) հրամաններն ու հանձնարարականները, ինքնակամ չլքել ծառայության վայրը:

5. Այլընտրանքային զինվորական ծառայողների աշխատաժամանակը կարգավորվում է ներքին ծառայության կանոններով:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ: Այլընտրանքային աշխատանքային ծառայողի աշխատաժամանակի տեւողությունը ~~չի կարող շաբաթական 48 ժամից ավելի կամ պակաս լինել~~ ***սահմանվում է շաբաթական 48 ժամ***, բացառությամբ արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերի, որոնք կարող են իրականացվել ծառայության վայրում տարերային կամ տեխնածին աղետի, հրդեհի, վթարի կանխման կամ դրանց հետեւանքների վերացման, ինչպես նաեւ այնպիսի ծառայողական առաջադրանքների կատարման համար, որոնք, իրենց առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող կասեցվել կամ դադարեցվել:

6. Այլընտրանքային աշխատանքային ծառայողների մասով սույն օրենքով չկարգավորված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով:

ՀՈԴՎԱԾ 20. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Այլընտրանքային զինվորական ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են ~~"Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով~~ ***օրենքով սահմանված կարգով***:

2. Այլընտրանքային աշխատանքային ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (ներառյալ՝ աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով հաշմանդամ ճանաչվելու կամ մահանալու դեպքում) իրականացվում է "Պետական կենսաթոշակների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Այլընտրանքային ծառայության ժամկետը ներառվում է քաղաքացու ընդհանուր աշխատանքային եւ ապահովագրական ստաժում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-165-24.10.2017-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հ/h	**Առաջարկի հեղինակը**	**Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը**	**Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1.	Կառավարություն	7-րդ հոդված, 2-րդ մաս	օրենքի 17-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասի վերջին նախադասությունում «պատճենն» բառից հետո լրացնել «3-օրյա ժամկետում» բառերը:	Ընդունելի է	Ընդունվել է